«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
ՀՀ,ք.Երևան 0010
Տիգրան Մեծ 4
Հեռ. +374 10 524 724
www.perfectaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պրեմիեր Ֆուդս» ՍՊԸ-ի բաժնետերերին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Պրեմիեր Ֆուդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության **«Վերապահումով կարծիքի հիմք»** բաժնում ներկայացված հանգամանքի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում 2022 թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

Ինչպես նկարագրված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում, Ընկերությունը 2017 և 2021 թվականներին տրամադրել է երաշխիք փոխկապակցված կողմերի պարտավորությունների մասով: Ընկերությունը չի որոշել այս ֆինանսական երաշխավորության իրական արժեքը՝ տրման ամսաթվի դրությամբ և չի չափել երաշխավորության պայմանագրերի գծով պարտավորությունը 2022 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչը համարվում է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի խախտում: Երաշխավորության պայմանագրերի համաձայն Ընկերության առավելագույն ռիսկը սահմանափակվում է 1,151,768 հազար ՀՀ դրամով: Մենք անկարող էինք որոշել այս խեղաթյուրման ազդեցությունը պարտավորությունների և չբաշխված շահույթի վրա 2022 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվերին ավարտված տարիների շահույթի և ընդամենը համապարփակ եկամտի վրա և ֆինանսական հաշվետվություններին կից համապատասխան ծանոթագրությունների վրա:

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային

ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (*ՀԷՄՍԽ կանոնագիրք*) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ֆինանսական հաշվետվությունների Հավելված Ա-ում բացահայտված ֆինանսական հաշվետվությունների լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ընկերության գործունեության վերաբերյալ բաժնետերերին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու նպատակով և չի պահանջվում ՖՀՄՍ-ով: Նման տեղեկատվությունը չի ենթարկվել ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի ժամանակ կիրառված աուդիտի ընթացակարգերին և, հետևաբար, մենք չենք տրամադրում կարծիք այդ հարցի վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք

բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

Ա. Բաբայան

Տնօրեն/ բաժնետեր

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Սեպտեմբերի 01, 2023 թ.

«Պրեմիեր Ֆուդս» ՍՊԸ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2022թ.	2021թ.
Հասույթ	4	6,847,608	6,187,847
Վաճառքի ինքնարժեք	5	(4,741,885)	(4,389,448)
Համախառն շահույթ		**2,105,723**	**1,798,399**
Այլ եկամուտ	9	38,467	35,780
Դրամաշնորհային եկամուտ	16	-	26,494
Զուտ ֆինանսական ծախսեր	8	(753)	(11,528)
Տարածման և շուկայավարման ծախսեր	7	(1,203,372)	(1,116,294)
Վարչական ծախսեր	6	(369,143)	(376,609)
Այլ ծախսեր		(50,382)	(24,040)
Արտարժույթի փոխարկումից (վնաս)/օգուտ		70,613	(29,140)
Շահույթ՝ նախքան շահութահարկով հարկումը		**591,153**	**303,062**
Շահութահարկի գծով ծախս	10	(99,251)	(60,460)
ՇԱՀՈՒՅԹ ԵՎ ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ		**491,902**	**242,602**

Հաստատվել է հրապարակման համար 2023 թ. Սեպտեմբերի 1-ին:

Գուրգեն Հարությունյան
Տնօրեն

Հայկամիկ Կոլոյան
Ֆինանսական Բաժնի Ղեկավար

9-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Պրեմիեր Ֆունդս» ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2022 թ. դեկտեմբերի 31	2021 թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	593,724	577,834
Ներդրումային գույք	15	59,525	64,999
Հետաձգված հարկային ակտիվներ	10	17,373	21,590
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		25,591	16,266
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**696,213**	**680,689**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	494,521	448,506
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13,19	1,355,550	1,160,653
Տրամադրված վարկեր	19	496,815	573,254
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	179,383	135,934
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2,530,683**	**2,318,347**
Ընդամենը ակտիվներ		**3,222,482**	**2,999,036**
Սեփական կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ		50	50
Լրացուցիչ վճարված կապիտալ		87,133	87,133
Չբաշխված շահույթ		2,236,678	1,724,396
Ընդամենը սեփական կապիտալ		**2,323,861**	**1,811,579**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	-	-
		-	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	-	108,315
Պետական դրամաշնորհ	16	-	4,871
Շահութահարկի գծով ընթացիկ կրեդիտորական պարտքեր		54,132	37,230
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	17	844,489	794,439
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**898,621**	**944,855**
Ընդամենը պարտավորություններ		**898,621**	**944,855**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3,222,482**	**2,999,036**

9-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով

	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ վճարված կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	**50**	**87,133**	**1,724,396**	**1,811,579**
Շահույթ և տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	242,602	242,602
Մնացորդը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**87,133**	**1,966,998**	**2,054,181**
Շահույթ և տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	491,902	491,342
Շահաբաժնի վճարում			(222,222)	(222,222)
Մնացորդը 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**87,133**	**2,236,678**	**2,323,251**

9-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2022թ.	2021թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված հասույթ		8,442,681	7,741,699
Մատակարարներին տրված վճարներ		(6,783,367)	(6,067,688)
Աշխատողներին տրված վճարներ		(1,097,904)	(1,045,585)
Գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցներ		**561,410**	**628,426**
Վճարված տոկոս		(14,037)	(15,139)
Այլ գործառնական դրամական արտահոսքեր		(48,455)	(56,613)
Վճարված շահութահարկ		(54,291)	(46,169)
Գործառնական գործունեությունից առաջացած զուտ դրամական միջոցներ		**444,627**	**510,505**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների համար վճարումներ		(115,959)	(78,729)
Ժամկետային ավանդներ բանկերում			(391,575)
Բանկերում ժամկետային ավանդների մարում			360,880
Տրամադրված վարկեր		(303,000)	(782,216)
Տրամադրված վարկերի դիմաց վճարում		303,000	-
Ստացված վճարումներ տրամադրված վարկերից		-	202,000
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(115,959)**	**(689,640)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Մուտքեր վարկերից և փոխառություններից		478,319	-
Վարկերի և փոխառությունների մարում		(562,459)	(285,714)
Շահաբաժնի վճարում		(200,000)	
Ֆինանսական գործունեությունում (օգտագործված)/ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**(284,140)**	**(285,714)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**44,528**	**(464,849)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		**135,934**	**604,484**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		(1,080)	(3,701)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	12	**179,382**	**135,934**

9-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պրեմիեր Ֆունդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը («Ընկերություն») հիմնադրվել է 2012 թ. փետրվարի 23-ին Հայաստանի Հանրապետությունում՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն: 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մայր ընկերություն է հանդիսանում «Էլսու. Ինք.» (գրանցված 3076 Սըր Ֆրենսիս Դրեյք մայրուղի, Ռոուդ Թաուն, Թորտոլա, Բրիտանական Վիրջինյան կղզիներ հասցեում): Ընկերությունը վերահսկվում է մի խումբ անհատ ներդրողների կողմից, որոնցից յուրաքանչյուրը չունի վերջնական վերահսկողություն:

Ընկերությունը ներգրավված է գործունեության հետևյալ ոլորտներում՝

- «Նեստլե» ապրանքանիշի չոր նախաճաշերի, մանկական սննդի և կենդանիների կերի ներմուծում և վաճառք
- «Մակֆա» ապրանքանիշի ալյուրի և մակարոնեղենի ներմուծում և վաճառք

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Բագրատունյաց փողոց 89/1: 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմել է 163 (2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 178):

2. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել տեսանելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Պատրաստման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	2022 թ. դեկտեմբերի 31	2021 թ. դեկտեմբերի 31
Փակման փոխարժեք (ՀՀ դրամ)		
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար	393.57	480.14
ՀՀ դրամ/եվրո	420.06	542.61
ՀՀ դրամ/ռուբլի	5.59	6.42

Գործառնական արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): Ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի

ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ, և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական քաղաքականության մեջ:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա: Ի լրումն դրա, հետաձգված հարկային պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջացել է գուդվիլի սկզբնական ճանաչումից:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել, կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Եթե ընթացիկ կամ հետաձգված հարկերն առաջանում են բիզնեսների միավորման սկզբնական հաշվապահական հաշվառման արդյունքում, ապա հարկային հետևանքները ներառվում են բիզնեսների միավորման հաշվապահական հաշվառման մեջ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկման բոլոր վնասները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռք բերման գինը, այդ թվում՝ ներմուծման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերն ու այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Երբ հիմնական միջոցի միավորը պարունակում է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող բաղադրիչներ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցի միավորի փոխարինման համար կատարված ծախսը կապիտալացվում է դուրս գրված միավորի հաշվեկշռային արժեքով: Այլ հետագա ծախսերը կապիտալացվում են, եթե այդ ծախսից առաջանում են հետագա տնտեսական օգուտներ: Մնացած բոլոր ծախսերը, այդ թվում վերանորոգման և սպասարկման, ճանաչում են շահույթում և վնասում:

Սեփականության իրավունքով պատկանող հողի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենք-շինություններ	*20 տարի*
Փոխադրամիջոցներ	*8 տարի*
Սարքավորումներ	*8 տարի*
Այլ	*8 տարի*

50,000 ՀՀ դրամից պակաս արժեքով հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Հիմնական միջոցների տարրն ապաճանաչվում է այն օտարելիս, կամ երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի ապաճանաչումից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուդվիլից

Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը: Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը իր օգտագործման արժեքից և իրական արժեքից ամենամեծն է՝ հանած վաճառքի ծախսերը:

Օգտագործման արժեքը գնահատելիս կանխատեսվող կանխիկ դրամի հոսքերը իջեցվում են իրենց ներկա արժեքին՝ օգտագործելով նախնական հարկային զեղչման տոկոսը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի և ակտիվին հատուկ ռիսկերի ներկայումս առկա շուկայական գնահատումները, որոնց համար ապագա դրամական հոսքերի գնահատումները չեն ճշգրտվել:

Արժեզրկման փորձարկման նպատակով ակտիվները խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբի մեջ, որն առաջացնում է շարունակական օգտագործման դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծ մասամբ անկախ են այլ ակտիվների կամ ակտիվների խմբերի դրամական միջոցներից («դրամաստեղծ միավոր»):

Բիզնեսի միավորման ձեռքբերման արդյունքում ձեռք բերված գուդվիլը, արժեզրկման փորձարկման նպատակով, հատկացվում է դրամաստեղծ միավորներին, որոնցից ակնկալվում է, որ օգուտ կստանան միավորման համակցվածությունից:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, եթե ակտիվի կամ դրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների մասով ճանաչված արժեզրկումից կորուստները հատկացվում են նախ՝ միավորներին հատկացվող ցանկացած գուդվիլի հաշվեկշռային արժեքը նվազեցնելու համար, այնուհետև բաժնետոմսի (միավորների խմբի) մյուս ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու համար:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են հաշվեկշռային արժեքի և զուտ իրացման արժեքի նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջին մուտք՝ առաջին ելք հիմունքով: Զուտ իրացվելի արժեքն իրենից ներկայացնում է պաշարների գնահատված իրացման արժեքը՝ հանած բոլոր այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են այն ավարտելու և վաճառքն իրականացնելու համար:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ երրորդ կողմն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ և բանկերում պահվող միջոցները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ ֆինանսական ակտիվների և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով ֆինանսական պարտավորությունների), ըստ անհրաժեշտության ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից, սկզբնական ճանաչման ժամանակ: Գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական ակտիվներ. Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապաճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանների անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը:

ՖՀՄՍ 9 շրջանակներում ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Մասնավորապես՝

- Պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:
- Պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, ինչպես նաև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով;
- Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով

Բիզնես մոդելը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:

Ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է, թե արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են գործող բիզնես մոդելի մաս, թե արդյոք դրանք արտացոլում են նոր բիզնես մոդելի մեկնարկը:

Արժեզրկում. Առևտրային դեբիտորական պարտքերի, այլ ակտիվների և դրամական միջոցների և դրանց համարժեք մնացորդների համար, Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ ամբողջ ժամկետում ԱՊԿ վնասի գծով պահուստի չափման համար:

Ընկերությունը որոշում է այդ հոդվածներով ակնկալվող պարտքային կորուստները՝ օգտագործելով պահուստի մատրիցա, որը գնահատվում է պարտապանների ժամկետանց կարգավիճակի հիման վրա պարտքային կորստի պատմական փորձի հիման վրա, որը հարմարեցված է ըստ անհրաժեշտության՝ արտացոլելու ընթացիկ պայմանները և ապագա տնտեսական պայմանների գնահատումները:

Ֆինանսական ակտիվների փոփոխությունը և ապաճանաչումը. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթում կամ վնասում իրական արժեքով չափվող կամ այլ ֆինանսական պարտավորություններ:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքների մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը հաշվարկելու և տոկոսադրույքի ծախսը համապատասխան ժամանակահատվածում բաշխելու համապատասխան մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույքի վերաբերյալ մանրամասների համար տե՛ս «Հուտ եկամուտ» բաժինը վերևում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Որակական գործոնների, քանակական գործոնների և որակական և քանակական գործոնների ընդհանուր ազդեցության ուսումնասիրություն Ընկերությունը եզրակացնում է, որ փոփոխությունը էական է հետևյալ որակական գործոնների արդյունքում՝

- Ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն;
- Գրավի ապահովման փոփոխություն կամ վարկունակության այլ բարձրացում;
- Փոխարկման տարբերակի ընդգրկում;
- Ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները զգալիորեն տարբերվում են, եթե զեղչված ներկա դրամական հոսքերի արժեքը, համաձայն նոր պայմանների, ներառյալ ցանկացած վճարած վճարները, որոնք հանվում են ցանկացած ստացված վճարից և զեղչված են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10%-ով տարբերվում են մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից սկզբնական ֆինանսական պարտավորության գծով:

Եթե փոփոխությունը էական չէ, ապա տարբերությունը՝ (1) պարտավորության հաշվեկշռային արժեքից առաջ փոփոխությունը. և (2) փոփոխությունից հետո դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում որպես այլ շահույթի և վնասի շրջանակներում փոփոխության շահույթ կամ վնաս:

Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացման ենթակա վճարման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է հաճախորդից ստացվելիք գումարների, զեղչերի, այլ նման հատկացումների չափով:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից հասույթը ըստ ՖՀՄՍ 15 ստանդարտի ճանաչվում է 5 փուլով՝

- Ընկերությունը նույնականացնում է հաճախորդի հետ կնքած պայմանագիրը.
- Ընկերությունը պայմանագրով սահմանում է պարտավորությունների կատարումը.
- Ընկերությունը սահմանում է գործարքի գինը.
- Գինը բաշխվում է պայմանագրի կատարման պարտավորությունների վրա.
- Եկամուտը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կատարում է իր պարտավորությունը:

Ընկերությունը ճանաչում է եկամուտը, երբ կամ որպես կատարման պարտավորություն, այսինքն, երբ ապրանքները վաճառվում են դեղատներում մանրածախ վաճառքի համար կամ առաքվում են հաճախորդներին մեծածախ վաճառքի համար:

Եկամուտը նվազում է հաճախորդների ակնկալվող շահույթի, զեղչերի և այլ նմանատիպ հավելումների դեպքում:

Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը հանդիսանում է վարձավճարի ստացման և/կամ կապիտալի արժեքի ավելացման համար նախատեսված սեփականություն (ներառյալ նման նպատակներով կառուցվող անշարժ գույքը), սկզբնապես գնահատվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը գնահատվում է իրական արժեքով: Ներդրումային սեփականության իրական արժեքի փոփոխության արդյունքում առաջացած շահույթները կամ վնասները ներառվում են շահույթի կամ վնասի կազմում այն ժամանակաշրջանում, որում առաջացել են դրանք:

Ներդրումային գույքը ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ ներդրումային գույքը մշտապես հանվում է օգտագործման իրավունքից, և օտարումից ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Գույքի ապաճանաչման արդյունքում առաջացող ցանկացած շահույթ կամ վնաս (որը հաշվարկվում է որպես զուտ օտարումից ստացված հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն) ներառվում է շահույթի կամ վնասի մեջ այն ժամանակահատվածում, երբ գույքը ապաճանաչվում է:

Կապիտալ

Կանոնադրական կապիտալը ճանաչվում է ստացված համալրումների իրական արժեքով:

Դրամական միջոցների հոսքեր

Անուղղակի հարկերը ներառված են կապալառուներին տրված վճարներից և ստացված եկամուտներից գոյացած դրամական միջոցներում:

3. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ընկերության ղեկավարությանն անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ. Ընկերությունը հաշվեգրում է ստացման ենթակա գումարների մասով ակնկալվող պարտքային կորուստների պահուստները, որպեսզի հոգա հավանական կորուստները այն դեպքում, երբ հաճախորդը չի կարողանում կատարել անհրաժեշտ մարումները: Սույն ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստները չափվում են՝ օգտագործելով պահուստային մատրիքսը, որը հիմնված է պարտքային կորուստների մասով Ընկերության պատմական փորձի վրա:

Ընկերությունը դուրս է գրում ստացման ենթակա գումարները որպես վճարման ոչ ենթակա գումարներ պարտապան կոնտրագենտի լուծարման կամ ֆինանսական վիճակի էական վատթարացման մասին տեղեկատվություն ստանալու դեպքում: Ընկերությունը չի իրականացնում հասանելիք դրամական միջոցների հարկադիր բռնագանձման ընթացակարգեր:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի փոփոխություն

Ընկերության հիմնական միջոցները ենթարկվում են մաշվածության դրանց օգտակար ծառայության ժամկետներում գծային մեթոդով, որը հիմնված է ղեկավարության բիզնես ծրագրերի և գործառնական գնահատումների վրա:

Այն գործոնները, որոնք կարող են ազդել հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատման վրա, հետևյալն են՝

- Տեխնիկական սպասարկման տեխնոլոգիաների փոփոխություններ;
- Փոփոխություններ նորմատիվ ակտերում և օրենսդրությունում, և
- Անկանխատեսելի գործառնական խնդիրներ:

4. ՀԱՍՈՒՅԹ

	2022 թ.	2021 թ.
Նեստլե	5,912,240	5,471,242
Մակֆա	884,286	680,742
Այլ	51,082	35,863
	6,847,608	**6,187,847**

5. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

	2022 թ.	2021 թ.
Ապրանքների ձեռքբերում	4,411,405	4,078,557
Տեղափոխման ծախս	241,415	228,987
Կորած և վնասված ապրանքների արժեք	74,021	67,634
Տուրքեր	13,836	13,124
Այլ ծախսեր	1,208	1,146
	4,741,885	**4,389,448**

6. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2022թ.	2021թ.
Աշխատակիցների հատուցումներ	197,403	222,619
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	41,753	34,959
Մաշվածության և ամորտիզացիոն ծախսեր	35,846	32,243
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	13,754	18,555
Աուդիտի և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	23,648	15,221
Բանկային և ապահովագրական ծախսեր	9,105	11,796
Տաքսի ծառայության ծախսեր	7,346	8,781
Փոստային և հեռահաղորդակցության ծախսեր	-	-
Նվիրատվություն	-	-
Այլ վարչական ծախսեր	40,288	32,435
	369,143	**376,609**

7. ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ

	2022թ.	2021թ.
Աշխատակիցների հատուցումներ	811,139	840,958
Վառելիք	107,825	81,124
Մաշվածության և ամորտիզացիոն ծախսեր	65,350	80,852
Գովազդի և շուկայավարման ծախսեր	75,552	37,511
Պահեստի ծախսեր	21,361	30,950
Տրանսպորտային միջոցների սպասարկման ծախսեր	36,147	26,571
Առաքման ծախսեր	30,172	22,283
Փոխադրամիջոցների վարձակալություն	7,984	7,785
Արժեզրկման (վերականգնում)/ կորստի ծախս աևտրային դեբիտորական պարտքերի գծով		(29,916)
Այլ տարածման ծախսեր	47,842	18,176
	1,203,372	**1,116,294**

8. ՉՈՒՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2022 թ.	2021 թ.
Տոկոսային եկամուտ բանկերում ընթացիկ հաշիվներից	30,999	17,243
Տոկոսային ծախս	(18,891)	(28,771)
	12,108	**(11,528)**

9. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

	2022 թ.	2021 թ.
Եկամուտ վարձակալությունից	9,606	11,858
Ապահովագրական փոխհատուցումներ	8,763	9,676
Եկամուտ ծառայություններից	3,600	3,600
Եկամուտ պալլետների վաճառքից	243	6,942
Այլ եկամուտ	16,498	3,704
	38,467	**35,780**

Ընկերության ներդրումային գույքը վարձակալությամբ տրված է կապակցված կողմին:

10. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Ընկերությունը չափում և գրանցում է իր ընթացիկ հարկային կրեդիտորական պարտքերը և հարկման բազաները ակտիվներում և պարտավորություններում՝ համաձայն ՀՀ-ում, որտեղ և իր գործունեությունն է ծավալում Ընկերությունը, գործող հարկային կանոնակարգերի, որոնք կարող են տարբերվել ՖՀՄՍ պահանջներից:

Հետաձգված հարկերն արտացոլում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործված գումարների միջև եղած տարբերության զուտ հարկային հետևանքները: 2022 և 20221 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերությունները հիմնականում կապված են եկամտի և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդների/ժամկետների հետ, ինչպես նաև որոշ ակտիվների տարբեր հարկման բազաների արդյունքում առաջացած ժամանակավոր տարբերությունների հետ:

Ստորև ներկայացված համեմատություններում օգտագործված է շահութահարկի 18% դրույքաչափ, որը վճարվում է ՀՀ-ում գործող իրավաբանական անձանց կողմից հարկվող շահույթի դիմաց (ինչպես սահմանված է)՝ համաձայն ՀՀ-ում գործող հարկային օրենքներին:

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկ

	2022 թ.	2021 թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	95,034	53,385
Հետաձգված հարկի գծով ծախս/(օգուտ)	4,217	7,075
Ընդամենը շահութահարկի գծով ծախս տարվա համար	**99,251**	**60,460**

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար ՀՀ դրամով

	2022 թ.		2021 թ.	
Շահույթը նախքան հարկումը	591,153		303,062	
Շահութահարկի գծով ծախս	106,408	18%	54,551	18%
Չուտ ծախսերի/(եկամուտների) ազդեցությունը, որոնք չեն նվազեցվում հարկվող շահույթը որոշելիս	(12,711)		11,154	
Արտարժույթի ազդեցությունը	5,554		962	
	99,251		**60,460**	

Հետաձգված հարկային մնացորդներ

	2022 թ. հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկի հետաձգված ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտք	10,107	(827)	9,280
Այլ պարտավորություններ	11,483	4,217	15,700
Շահութահարկի հետաձգված զուտ ակտիվներ	**21,590**	**3,390**	**24,980**

	2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկի հետաձգված ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտք	15,491	(5,384)	10,107
Այլ պարտավորություններ	13,174	(1,691)	11,483
	28,665	**(7,075)**	**21,590**

11. ՊԱՇԱՐՆԵՐ

	2022թ. դեկտեմբերի 31	2021թ. դեկտեմբերի 31
Վաճառքի ենթակա ապրանքներ	489,712	443,052
Վառելիք և այլ	4,809	5,454
	494,521	448,506

Պաշարների դուրսգրման հետևանքով առաջացած կորուստը, որը ճանաչվել է որպես կորած և վնասված ապրանքների գծով ծախս տարվա ընթացքում, կազմել է 72,776 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 67,634 հազար ՀՀ դրամ), որոնք ամբողջությամբ ներառվել են վաճառքի ինքնարժեքի մեջ:

12. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաղիսանում են տեղական երեք բանկերում պահվող ընթացիկ հաշիվներ, արտահայտված են հիմնականում ՀՀ դրամով և ռուբլիով: Մանրամասն վերլուծությունը ներկայացված է ծան. 18-ում: Մնացորդներից ոչ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ: Ընկերության գրավադրված ակտիվները ներկայացված են ծան. 18-ում:

13. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔ

	2022 թ. դեկտեմբերի 31	2021 թ. դեկտեմբերի 31
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,409,870	1,099,065
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ	(68,597)	(56,149)
	1,341,273	**1,042,916**
Այլ դեբիտորային պարտքեր	5	82,314
	5	**82,314**
Ոչ ֆինանսական դեբիտորական պարտքեր		
Կանխավճարներ	14,272	17,721
Պետական բյուջեից ստացման ենթակա գումարներ		17,702
	14,272	**35,423**
	1,355,550	1,160,653

Արժեզրկումից կորստի գծով պահուստի համադրումը համաձայն ՖՀՄՍ 9-ի, հետևյալն է.

	Ընդամենը
2021 թ. հունվարի 1	**67,125**
Արժեզրկումից կորստի գծով ծախս	(3,023)
2021 թ. դեկտեմբերի 31	**64,102**
Արժեզրկման գծով վերականգնում	4,495
2022 թ. դեկտեմբերի 31	**68,597**

Ընկերության գրավադրված ակտիվները ներկայացված են ծան. 18-ում:

14. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	Հող	Շենքեր	Փոխադրամիջոցներ	Սարքավորում	Այլ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Արժեքը							
2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	**201,936**	**288,547**	**464,429**	**204,611**	**76,349**	**12,832**	**1,248,704**
Ավելացումներ	-	-	7,919	34,474	14,201	15,010	**71,604**
	-	-	(2,881)	-	-	-	**(2,881)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**201,936**	**288,547**	**469,467**	**239,085**	**90,550**	**27,842**	**1,317,427**
Ավելացումներ	-	4,590	64,524	36,803	10,636	5,466	**122,019**
Օտարումներ	-	-	(24,159)	(964)	(6,385)	-	**(31,508)**
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**201,936**	**293,137**	**509,832**	**274,924**	**94,801**	**33,308**	**1,407,938**
Կուտակված մաշվածություն							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**95,575**	**341,473**	**111,019**	**76,349**	**9,267**	**633,683**
Մաշվածության ծախս	-	14,991	30,848	47,216	9,192	5,374	**107,621**
			(1,714)				**(1,714)**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**110,566**	**370,607**	**158,235**	**85,541**	**14,641**	**739,590**
Մաշվածության ծախս	-	20,814	31,962	31,234	12,701	4,498	**101,213**
Օտարումներ	-	-	(13,765)	(965)	(6,385)	-	**(21,115)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**131,380**	**388,804**	**188,504**	**91,861**	**19,139**	**819,688**
Զուտ հաշվեկշռային արժեք							
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**201,936**	**177,981**	**98,860**	**80,850**	**5,009**	**13,201**	**577,837**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**201,936**	**161,757**	**121,028**	**86,420**	**2,940**	**14,169**	**588,250**

Ընկերության գրավադրված ակտիվները ներկայացված են ծան. 18-ում:

15. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՒՅՔ

	2022 թ.	2021 թ.
Արժեք		
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	105,374	105,374
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**105,374**	**105,374**
Կուտակված մաշվածություն		
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	40,375	34,901
Տարվա ծախս	5,474	5,474
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**45,849**	**40,375**
Զուտ հաշվեկշռային արժեք		
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**59,525**	**64,999**

Ներդրումնային գույքը ընկերության պահեստի և վարչական շենքի մաս է կազմում, որը տրված է վարձակալության որպես պահեստ և վարչական շենք կապակցված կողմին:

16. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2022 թ. դեկտեմբերի 31	2021 թ. դեկտեմբերի 31
Բանկային վարկեր	-	108,315
	-	**108,315**
Ընթացիկ	-	108,315
Ոչ ընթացիկ	-	
	-	**108,315**

Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունների համադրում

Ստորև աղյուսակում մանրամասն ներկայացվում են Ընկերության՝ ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորություններ գծով փոփոխությունները, ներառյալ կանխիկ և ոչ կանխիկ փոփոխությունները: Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունները այն պարտավորություններն են, որոնց համար դրամական միջոցների հոսքերը դասակարգվել են կամ ապագա դրամական հոսքերը կդասակարգվեն Ընկերության՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որպես դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից:

	Ընդամենը
2021թ. հունվարի 1	**380,397**
Տոկոսային ծախս	28,771
Մարված ընթացիկ տարվա ընթացքում	(300,853)
Վարկերի մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**108,315**

17. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2022 թ. դեկտեմբերի 31	2021 թ. դեկտեմբերի 31
Ֆինանսական պարտավորություններ		
Ծառայությունների և ապրանքների գծով կրեդիտորական պարտքեր	666,729	535,149
Աշխատավարձերի գծով պարտավորություններ	0	39,579
	666,729	**574,728**
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Հարկերի գծով կրեդիտորական պարտքեր	124,990	126,893
Արձակուրդային պահուստ	40,364	63,793

Այլ	12,406	29,025
	844,489	**794,439**

18. ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կապիտալի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու գործունեության անընդհատության սկզբունքը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

Ընկերության կապիտալի կառուցվածքը բաղկացած է սեփական կապիտալից (ներառյալ թողարկված կապիտալը, լրացուցիչ վճարված կապիտալը և չբաշխված շահույթը):

Ընկերությունը ենթակա չէ կապիտալի գծով որևէ արտաքին կողմի սահմանած պահանջների:

Ընկերության ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալին ներկայացված պահանջները՝ պահպանելու ֆինանսական արդյունավետ կառուցվածք՝ միևնույն ժամանակ խուսափելով ավելորդ ֆինանսական լծակներից: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և կատարում կարգավորումներ՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների ռիսկային բնութագրերից: Կապիտալի կառուցվածքի պահպանման կամ ճշգրտման նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին տրվող շահաբաժինների քանակը, թողարկել նոր բաժնետոմսեր, վաճառել ակտիվները կամ նվազեցնել պարտքերը:

Ընկերության սեփական կապիտալի և փոխառու միջոցների միջև հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն է՝

	2022 թ. դեկտեմբերի 31	**2021 թ. դեկտեմբերի 31**
Պարտք (i)	-	108,315
Դրամական միջոցների և բանկային հաշիվների մնացորդներ	(179,383)	(135,934)
Զուտ պարտք	**(179,383)**	**(27,619)**
Սեփական կապիտալ (ii)	**2,327,647**	**2,054,181**

(i) Պարտքը սահմանվում է որպես երկարաժամկետ և կարճաժամկետ փոխառություն (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը):

(ii) Սեփական կապիտալը ներառում է Ընկերության ողջ կապիտալը և պահուստները, որոնք կառավարվում են որպես կապիտալ:

Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները

Ընկերությունը ենթակա է ֆինանսական գործիքների հետ կապված բազմաթիվ ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական, պարտքային և իրացվելության ռիսկերը:

Ստորև նկարագրվում են առավել նշանակալի ֆինանսական ռիսկերը, որոնց ենթակա է Ընկերությունը:

Շուկայական ռիսկ

Ընկերությունը տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ չի կնքում իր արտարժութային և տոկոսադրույքի ռիսկերին ենթարկվածության կառավարման նպատակով:

Ընկերության՝ շուկայական ռիսկերին ենթարկվածության կամ այդ ռիսկերի կառավարման ու գնահատման եղանակների փոփոխություններ չեն գրանցվել:

Արտարժութային ռիսկի կառավարում

Ընկերությունը արտարժույթով գործարքներ է կատարում, ուստի ենթակա է արտարժույթի փոխարժեքի տատանումներին:

Ընկերության՝ արտարժույթով գնանշված դրամական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջում հետևյալն են՝

	2022 թ. դեկտեմբերի 31				
	Դրամ	Եվրո	ԱՄՆ դոլար	Ռուբլի	Ընդամենը
Ոչ-ածանցյալ ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանք համարժեքներ	58,101	-	89,129	32,153	**135,934**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (պարտքային կորուստների գծով պահուստներից հետո)	1,342,072	-	52,134	7,710	**1,401,916**
Տրված փոխառություններ	-	-	-	-	**-**
	1,400,173	**-**	**141,263**	**39,863**	**1,581,299**
Ոչ-ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	145,687	-	292,842	228,201	**666,730**
Վարկեր և փոխառություններ					
	145,687	**-**	**292,842**	**228,201**	**666,730**
Զուտ դիրք	**1,254,486**	**-**	**(151,579)**	**(188,338)**	**914,569**

	2021 թ. դեկտեմբերի 31				
	Դրամ	Եվրո	ԱՄՆ դոլար	Ռուբլի	Ընդամենը
Ոչ-ածանցյալ ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանք համարժեքներ	26,406	-	109,016	512	**135,934**
Այլ դեբիտորական պարտքեր (պարտքային կորուստների գծով պահուստներից հետո)	1,096,043	-	12,815	16,372	**1,125,230**
	573,254	-	-	-	**573,254**
	1,695,703	**-**	**121,831**	**16,884**	**1,834,418**
Ոչ-ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	86,550	-	488,178	-	**574,728**
Վարկեր և փոխառություններ	108,315	-	-	-	**108,315**
	194,865	**-**	**488,178**	**-**	**683,043**
Զուտ դիրք	**1,500,838**	**-**	**(366,347)**	**16,884**	**1,151,375**

Ընկերության գործարքները հիմնականում կատարվում են ԱՄՆ դոլարով և ռուսական ռուբլիով:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ընկերության զգայունությունը ՀՀ դրամի՝ արտարժույթի փոխարժեքի 20% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 20%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժութային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն է՝ ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 20% փոփոխության տեսանկյունից: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ 20%-ի չափով: Երբ ՀՀ դրամն արժեվորվում է արտարժույթի նկատմամբ 20%-ի չափով, այն համեմատական բացասական ազդեցություն է ունենում շահույթի կամ կապիտալի վրա, ուստի ստորև բացասական թվով է նշվում:

	2022 թ. դեկտեմբերի 31		2021 թ. դեկտեմբերի 31	
Ազդեցությունը շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի վրա	+20% արժևորում	-20% արժեզրկում	+20% արժևորում	-20% արժեզրկում
Զուտ մնացորդի ազդեցությունը - ԱՄՆ դոլար	30,316	(30,316)	73,269	(73,269)
Զուտ մնացորդի ազդեցությունը – ռուբլի	7,973	(7,973)	3,377	(3,377)

Տոկոսային ռիսկ

Ընկերությունը ենթարկված չէ տոկոսադրույքի ռիսկերի, քանի որ չունի լողացող տոկոսադրույքով գործիքներ:

Պարտքային ռիսկի կառավարում

Պարտքային ռիսկ նշանակում է այն ռիսկը, երբ պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը ֆինանսական կորուստներ է կրում: Ընկերության առավելագույն պարտքային ռիսկը 2021 և 2020 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավասար է նրա ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներին վերոնշյալ ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվները, որոնք հավանականորեն Ընկերությանը ենթարկում են պարտքային ռիսկի, հիմնականում բաղկացած են առևտրի և այլ դեբիտորական պարտքերից, ինչպես նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից: Ընկերությունը որևէ առանձին գործընկերի նկատմամբ չունի նշանակալի պարտքային ռիսկ:

Ընկերությունը չունի որևէ գրավ կամ պարտքի ապահովվության այլ միջոցներ `իր ֆինանսական ակտիվների հետ կապված պարտքային ռիսկերը բարելավելու համար:

Ընկերությունը հիմնականում գործում է Հայաստանում ` երրորդ երկրներ աննշան արտահանմամբ, ինչը կազմում է ընդհանուր վաճառքի գրեթե 3.78% (2021 թ.` 8.7%): Հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հիմնված ակտիվները ունեն զգալի աշխարհագրական կենտրոնացում:

Բացի այդ, Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի `կապված բանկին տրված ֆինանսական երաշխիքների հետ փոխկապակցված կողմերի պարտավորության մասով: Ընկերությունը այս ֆինանսական երաշխիքները չի հաշվարկել իրենց իրական արժեքով՝ սկզբնական ճանաչման պահի դրությամբ և չի ճանաչել համապատասխան պարտավորություն 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես պահանջվում է ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» ստանդարտով, քանի որ այն չի կարողացել ճշգրիտ չափել փոխկապակցված կողմերի պարտավորության համար տրված ֆինանսական երաշխիքների արժեքի ճշգրտությունը: Ընկերության առավելագույն ռիսկը այս պարտավորության մասով կազմում է 1,991,727 հազար ՀՀ դրամ:

Այս գումարը այն առավելագույն գումարն է, որը Ընկերությունը կարող էր ստիպված լինել պայմանագրով վճարել երաշխավորված ամբողջ գումարի համար, եթե այդ գումարը պահանջվում է երաշխիքային կողմի կողմից: Ծանոթագրություն 18-ում երաշխիքի առավելագույն գումարը հատկացվում է ամենավաղ ժամանակահատվածին, որի ընթացքում կարող է վճարման պահանջ ներկայացվել: Հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի ավարտի ակնկալիքները՝ Ընկերությունը գտնում է, որ ավելի հավանական է, որ այդ գումարը կվճարվի՝ համաձայն պայմանավորվածության: Այնուամենայնիվ, այս գնահատումը ենթակա է փոփոխության՝ կախված երաշխիքի ներքո գտնվող բանկի պահանջի հավանականությունից, ինչը գործառույթ է այն հավանականության, որ բանկի կողմից պահվող երաշխավորված ֆինանսական դեբիտորական պարտքերը կրում են պարտքային վնասներ: Ավելին, Ընկերության ընդհանուր ակտիվները, ներառյալ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը, հիմնական միջոցները և այլն, ամբողջությամբ գրավադրված են այդ պարտավորության մասով:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:

Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ ունենալով համապատասխան պահուստների, բանկային և պահուստային փոխառության պայմանագրեր, շարունակական մոնիտորինգ իրականացնելով կանխատեսված և իրական դրամական միջոցների հոսքերի նկատմամբ, ինչպես նաև համապատասխանեցնելով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը:

Ստորև ներկայացված աղյուսակները մանրամասնում են Ընկերության մնացորդային պայմանագրային պարտավորություններն իր ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների համար, որոնք ունեն համաձայնեցված մարման ժամկետներ: Աղյուսակը կազմվել է հիմնվելով ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի վրա՝ ելնելով ամենավաղ ժամկետից, երբ Ընկերությունից կարող է պահանջվել վճարել: Աղյուսակը ներառում է և՛ տոկոսից, և՛ մայր գումարից բխող դրամական հոսքերը: Պայմանագրային պարտավորությունները հիմնված են ամենավաղ ժամկետի վրա, երբ Ընկերությունից կարող է պահանջվել վճարում:

	Միջին կշռված արդյունա-վետ տոկոսա-դրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	Ընդամենը	Հաշվեկշ-ռային արժեք
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Ոչ տոկոսակիր		46,671	620,058	**666,729**	**666,729**
Ֆինանսական երաշխավորության պայմանագիր	6.8%	1,151,768	-	1,151,768	1,151,768
		1,198,439	**620,058**	**1,818,497**	**1,818,497**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Ոչ տոկոսակիր		**39,579**	**535,149**	**574,728**	**574,728**
Ֆինանսական երաշխավորության պայմանագիր	**6.8%**	**1,991,727**	**-**	**1,991,727**	**1,991,727**
		2,031,306	**535,149**	**2,566,455**	**2,566,455**

Իրական արժեքի չափում

Ղեկավարությունը համարում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները, որոնք ճանաչվել են ֆինանսական հաշվետվություններում, մոտ են իրենց իրական արժեքներին:

19. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Ընկերության փոխկապակցված կողմեր են հանդիսանում սեփականատերերը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները և առանցքային ղեկավար անձնակազմը:

Ընկերության և փոխկապակցված կողմերի միջև գործարքների մանրամասները բացահայտված են ստորև՝ այդ թվում նաև գործարքների բնույթը, գործարքների գումարը, մարման ենթակա մնացորդի գումարը՝ ներառյալ պարտավորությունները և (i) ընդհանուր դրույթները և պայմանները՝ ներառյալ արդյոք դրանք երաշխավորված են և պայմանագրում ներկայացվող հատուցման էությունը և (ii) տրված կամ ստացված ցանկացած երաշխիքի մանրամասները; փոխկապակցված կողմերին հասանելիք ժամանակահատվածում ճանաչված ծախսերը:

Առևտրային գործարքներ

Տարվա ընթացքում Ընկերությունը կնքել է հետևյալ առևտրային գործարքները ընդհանուր վերահսկողության տակ գտնվող փոխկապակցված կողմերի հետ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում առկա են վճարման ենթակա հետևյալ մնացորդները.

	Փոխկապակցված անձանց / կողմից վճարման ենթակա գումարներ	
	2022 թ. դեկտեմբերի 31	**2021 թ. դեկտեմբերի 31**
Առևտրային դեբիտորական պարտք փոխկապակցված կողմերից	-	83,283
Վարձակալության գծով եկամուտ փոխկապակցված կողմերից	33,466	11,858
Վաճառք փոխկապակցված կողմերին	-	2,423
Փոխակապակցված կողմերին տրամադրված վարկեր	496,814	573,254
	530,280	**670,818**

Չվճարված գումարները գրավով ապահովված չեն և դրանք կվճարվեն կանխիկ միջոցներով: Կասկածելի պարտքը հաշվի է առնվել կապակցված կողմի դեբիտորական պարտքի նկատմամբ, որը ներառված է ընդամենը ԱՊԿ-ում:

Ընկերությունը փոխկապակցված կողմի վարկի մասով բանկին երաշխիք է տրամադրել 2017 և 2021 թթ: 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից երաշխավորված վարկի վճարման ենթակա գումարը կազմում 1,991,727 հազար ՀՀ դրամ: Ընկերության ընդհանուր ակտիվները, ներառյալ դրամական միջոցները, հիմնական միջոցները, դեբիտորական պարտքերը և այլն, գրավադրված են այս պարտավորության մասով: Մանրամասները ներկայացված են ծան. 18-ում:

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրություն

Ստորև ներկայացվում է առանցքային ղեկավար անձնակազմի կողմից տարվա ընթացքում ստացված վարձատրությունը.

	2022 թ.	**2021 թ.**
Աշխատավարձ	172,130	179,776
Պարգևավճարներ	21,449	80,699
Ընդամենը	**193,579**	**260,475**

20. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Դատական վարույթներ

Գործունեության բնականոն ընթացքում, ժամանակ առ ժամանակ, հաճախորդները և գործընկերներն Ընկերության դեմ դատական վարույթներ և բողոքներ են ներկայացնում: Ղեկավարությունը համոզված է, որ նման դատական վարույթները և բողոքներն անբարենպաստ ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ Ընկերության ապագա գործունեության արդյունքների վրա, ուստի ֆինանսական հաշվետվություններում ոչ մի պահուստ չի ստեղծվել:

Հարկում

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային տարին շարունակում է բաց լինել հարկային մարմինների վերանայման համար՝ հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում:

Այս հանգամանքները կարող են հարկային ռիսկեր առաջացնել ՀՀ-ում, որոնք առավել նշանակալի են, քան այլ երկրներում: Ղեկավարությունը կարծում է, որ համարժեքորեն է նախատեսել հարկային պարտավորությունները, հիմնվելով ՀՀ գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այդուհանդերձ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է նշանակալի լինել, եթե այդ մարմիններին հաջողվի կիրարկել իրենց մեկնաբանությունները:

Գործարար միջավայրը

Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների: Հայաստանի ապագա տնտեսական ուղղվածության վրա մեծ ազդեցություն ունեն կառավարության որդեգրած հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը, ինչպես նաև իրավական, կարգավորող և քաղաքական միջավայրի զարգացումները:

Հայաստանը դեռևս գտնվում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների գործընթացում: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Ի լրումն, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեության ծավալները, ինչը թերևս չի արտացոլում ֆինանսական գործիքների արժեքները: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում համակարգային ռիսկերից բխող անբարենպաստ փոփոխությունները, ներառյալ վարկային միջավայրի ցանկացած խստացում, կարող են դանդաղեցնել կամ խաթարել Հայաստանի տնտեսությունը, որը բացասաբար է անդրադառնում Ընկերության գործունեության, դրա արդյունքների, ֆինանսական պայմանների և հեռանկարների վրա: Շուկայական սթրեսի ժամանակ Հայաստանի տնտեսությունը և Ընկերության աշխատանքը կարող են ենթարկվել վատթարացման:

Քաղաքական անկայունությունը և ռազմական գործողությունները տարածաշրջանում

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 10-ին կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Հայտարարության արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի են ունեցել 2021թ. հունիսին:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ կազմակերպությունների գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

2022 թվականի փետրվարին Ուկրաինայի և Ռուսաստանի Դաշնությունան տնտեսական և քաղաքական իրավիճակները հանգեցրին Ռուսաստանի ֆինանսական շուկայում

անկայունության աճին: Իրադարձությունների զարգացման անորոշությունը մեծանում է: ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Մեծ Բրիտանիան և մի շարք այլ երկրներ նոր պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի դեմ:

Ղեկավարությունը հետևում է տնտեսական և քաղաքական իրավիճակի ներկա փոփոխություններին և ձեռնարկում միջոցներ, որոնք անհրաժեշտ են, առաջիկայում, Ընկերության գործունեության կայունությունն ու զարգացումը պահպանելու համար:

Այս և հետագա զարգացումները կարող են ազդեցություն ունենալ արտաքին բիզնես միջավայրի և դրանում գործող ընկերությունների գործունեության վրա:

Հավելված Ա

Ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտի չենթարկված լրացուցիչ տեղեկատվություն 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՈՒԴԻՏԻ ՉԵՆԹԱՐԿՎԱԾ ՈՉ-ՀԸՀՍ (ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ) ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Մեր տրամադրած արդյունքները պատրաստվել են ՖՀՄՍ-ների սկզբունքների համաձայն, որոնք մանրամասն ներկայացված են ֆինանսական հաշվետվություններում: Կատարողականի գնահատման ընթացքում կիրառվել են ֆինանսական գնահատականներ, որոնք ներառում են մեր տրամադրած արդյունքների հիման վրա ստացված գնահատականները (օրինակ՝ եկամուտը՝ մինչև տոկոսի, հարկերի, մաշվածության և ամորտիզացիայի վճարները կատարելը (EBITDA)): Դրանք համարվում են ոչ-ՀԸՀՍ ֆինանսական գնահատականներ:

Տնօրենները համոզված են, որ այս ոչ-ՀԸՀՍ գնահատականները բաժնետերերին Ընկերության կատարողականի վերաբերյալ հավելյալ օգտակար տեղեկություններ են տրամադրում: Ոչ-ՀԸՀՍ գնահատականները սահմանված չեն ՖՀՄՍ-ում, ուստի հնարավոր չէ ուղղակի համեմատություն կատարել այլ ընկերությունների ոչ-ՀԸՀՍ գնահատականների հետ: Այս գնահատականները նախատեսված չեն փոխարինել կամ գերակայել ՖՀՄՍ գնահատականների նկատմամբ: Ոչ-ՀԸՀՍ ֆինանսական գնահատականները համադրվում են ներկայացված ամենամոտ ֆինանսական գնահատականի հետ (մինչև շահութահարկով հարկումը ստացված շահույթ): Ստորև ներկայացված են ոչ-ՀԸՀՍ ֆինանսական գնահատականները.

	2022թ. (աուդիտի չենթարկված)	**2021թ. (աուդիտի չենթարկված)**
Շահույթը մինչև շահութահարկը	591,153	303,062
Զուտ ֆինանսական ծախսեր	(12,108)	11,528
Մաշվածություն և ամորտիզացիա	101,196	113,095
EBITDA	**680,241**	**427,685**
Փոխարժեքային տարբերություններից օգուտ/(վնաս)	(70,613)	29,140
Ճշգրտված EBITDA	**609,628**	**456,825**

Հաշվի առնելով այն փաստը, որ EBITDA-ն հանդիսանում է ոչ-ՀԸՀՍ գնահատական, ղեկավարությունը հաշվարկում է EBITDA-ն այն մեթոդներով, որոնք, ըստ ղեկավարության, լավագույնս համապատասխանում են տվյալ իրավիճակին: